



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Ս. Յարութեան տօնին յաջորդող երրորդ Կիրակին կը կոչուի Կարմիր Կիրակի: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Կարմիր Կիրակին, 15 Մայիսին, պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE

This Sunday, May 15th, 2011 is the third Sunday after Easter, which is known as Red Sunday.

On this day, H.E. Archbishop Moushegh Mardirossian will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Mary's Church in Glendale.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՆԵՐՈՒ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՈՒ ՏԻԿԱՆՑ ՍԻՈՒԹԵԱՆՑ ՀԵՏ

Հինգշաբթի, Մայիս 12-ի երեկոյեան, նմանապէս Ազգ. Երեսփոխանական 39րդ ժողովի աշխատանքներու ծիրին մէջ, Ազգ. Առաջնորդարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Թեմիս Եկեղեցիներու Հոգաբարձութեանց եւ Տիկնանց Սիութեանց Համագումարը: Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի ու Ազգ. Վարչութեան հրաւերով կազմակերպուած ժողովին, ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը եւ հրաւիրեալ կազմերը:

Առաջնորդ Սրբազանը եւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան արտասանեցին ողջոյնի խօսքեր, կանգ առնելով նման ժողովներու դերին ու կարեւորութեան վրայ եւ հունի մէջ դնելով ժողովին ընթացքը:



Առաջին գեկոյցը ներկայացուց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենադպիրը, որ անդրադարձաւ այս մարմինին բեղուն աշխատանքին:

Անոր գեկուցումէն ետք, եւ նկատի ունենալով, որ մարմինը վերջերս ունեցած է դիւանի փոփոխութիւն, Առաջնորդ

Սրբազանը բեմ հրաւիրեց նախկին եւ նոր ատենապետուհիները՝ Տիկնայք Մարիամ Կարապետեանն ու Սալբի Սրուբեանը:

Առաջնորդ Սրբազանն ու Տիկնանց Օժանդակ Մարմինը ծաղկեփունջով մը պատուեցին Տիկին Մարիամ Կարապետեանը, իր բազմամեայ ծառայութեան համար, որ յամենայն դէպս կը շարունակուի Մարմինի նոր կազմին անոր անդամակցութեան շարունակումով:

Ապա, ծխական շրջաններու հոգաբարձութեանց եւ տիկնանց միութեանց ատենապետները կամ ներկայացուցիչները գեկուցումներ ներկայացուին իրենց միամեայ իրագործումներուն եւ յառաջիկայ ծրագիրներուն մասին: Չեկուցումներուն մէջ տեղ գտած էին այնպիսի իրագործումներ եւ աշխատանքներ, որոնք ունին ընդհանրական բոյթ եւ այս ձեւով, ծխական շրջանները առիթ ունեցան փոխադարձաբար օգտուելու փորձառութիւններէ:

Չեկուցումներէն ետք, Առաջնորդ Սրբազանը ժողովականներուն ուշադրութեան յանձնեց շարք մը օգտաշատ կետեր, զորս առանձնացուցած էր ներկայացուցած գեկոյցներէն եւ որոնք օրինակելի են: Ան մաղթեց, որ կարգ մը շրջաններու մէջ իրականացուող եկեղեցաշէն եւ ծուխի հոգեւոր աճումին նպաստող ծրագիրներ ու աշխատանքներ որդեգրուին նաեւ այլ շրջաններու կողմէ: Ան յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ այն մարտահրաւերներուն ու առաջադրանքներուն, որոնք կը կարօտին երախտաշատ ճիգերու անելի եւս լարումին եւ նա՛եւ մեր եկեղեցիներն ու ազգային հաստատութիւնները որոշ ճնշումի տակ դնող աշխարհատարած դժուարութեանց յաղթահարման: Թէ Առաջնորդ Սրբազանին եւ թէ հետեւած քննարկումներուն մէջ կարեւոր տեղ ունեցան նոր սերունդի հոգեմտաւոր կարիքներուն, հայեցի դաստիարակութեան ու զանոնք մեր եկեղեցական արժէքներուն հաղորդ պահելու կարիքներն ու առաջադրանքները:

Առաջնորդ Սրբազանին խօսքէն ետք, Ազգ. Վարչութեան ատենապետուհին ժողովականներուն ուշադրութեան յանձնեց ընդհանրական բնոյթով մտահոգութիւններ, որոնք կը բխին ժողովական

կեանքէ ու աշխատանքներու իրագործման ընթացքէն: Ան վեր առաւ կանոնագրային թելադրանքներու կարեւորութիւնը եւ շեշտեց մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայական աշխատանքի դաշտերը ծրագրուած եւ նուիրումով իրականացնելու կարեւորութիւնը:

Ժողովականները առիթ ունեցան լուսաբանական հարցումներու եւ ազգային ու եկեղեցական մտահոգութեանց մասին տեսակետներու փոխանակման:

Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեանը, որպէսզի արտասանէ իր սրտի խօսքը: Տիար Խ. Տիքիճեան գոհունակութիւն արտայայտեց մեծաթիւ ներկայութեամբ այս ժողովին համար եւ նկատել տուաւ, որ յառաջիկայ Յոկտեմբերին, երբ մեր Թեմը պիտի վայելէ Վեհափառ Հայրապետին հովուապետական այցելութիւնը, բոլորս միասնաբար աշխատանքի պիտի լծուինք, այդ պատմական այցելութիւնը պատուաբեր ձեւով յաջողութեամբ պսակելու համար:

Եզրափակիչ իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով անդրադարձաւ հովիւներուն, հոգաբարձութեանց եւ տիկնանց միութեանց նուիրեալ ծառայութիւններուն, ողջունեց ժողովականներուն նախանձախնդիր մօտեցումը եւ օրհնութեան աղօթքով փակեց ժողովը:

Հանդիպումը վերջ գտաւ «Կիլիկիա»ի խմբերգումով:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH PASTORS, BOARDS OF TRUSTEES AND LADIES GUILDS



On the occasion of the 39th Representatives Assembly (which will convene at the Prelacy on May 13th and 14th, 2011, by the invitation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Executive Council, on the evening of Thursday, May 12th, Pastors, Boards of Trustees, and Ladies Auxiliary Guilds of Prelacy Churches gathered

at the ԹԷԴիկրան և Զարուհի Դեր Գազարիան Hall to discuss the general activities as well as the concerns of their respective parishes. Central Executive member Mr. Khajag Dikijian also participated in the meeting.

The meeting opened with the Prelate's invocation, after which the Prelate and Executive Council Chair Mrs. Rima Boghossian welcomed the representatives and briefed them on the purpose of the meeting.

The first report to be presented was that of the Prelacy Ladies Auxiliary, which was read by the Secretary. Given that there was recently a change in the

Auxiliary officers, the Prelate invited up both the previous and current Chairladies, Mrs. Mariam Karapetian and Mrs. Salpi Srourian. On behalf of the Prelate and Ladies Auxiliary members, Mrs. Karapetian was presented with a bouquet in commendation for her years-long service as Chairlady.

Subsequently, one by one parish representatives of each church were invited to report on the current and future activities of their churches and any challenges they may face.

After the presentations, the representatives had the opportunity to discuss issues of concern to all parishes and to share their experiences and offer suggestions to one another.

In his remarks, the Prelate reflected on some highlights from the parish reports and wished that parishes take an example from one another and adopt initiatives that have been proven successful and give impetus to the spiritual growth of their parishes. He also reflected on challenges and concerns stemming from the global economic situation and that require special attention. The Prelate also spoke of the importance of bridging our youth to our church and heritage, a sentiment which was shared by all.

Following the Prelate's remarks, Executive Council Chair Mrs. Rima Boghossian spoke on general challenges and stressed the importance of serving our church and communities with commitment and devotion to ensure the successful realization of our mission and endeavors.

Central Executive Council member Mr. Khajag Dikijian was then invited to deliver his remarks. Mr. Dikijian spoke of the Pontifical visit of H.H. Catholicos Aram I, which will take place in October, and stressed that united efforts and collaboration is needed to ensure that the visit is a successful and historic one.

At the conclusion the Prelate commended the service of the Pastors, Boards of Trustees, and Ladies Guilds, and wished them success in their future endeavors. The meeting closed with the benediction by the Prelate and the singing of the Cilician anthem.

ԱՐԵՎՍԵԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ



Հիւսիսային
Ամերիկայի Արեւմտեան
Թեմի Ազգային
Երեսփոխանական Ժողովի
39րդ ստաշրջանի
Նախօրեակին,
Չորեքշաբթի, 11 Մայիս
2011ին, առաւօտեան ժամը
10:30ին, Ազգային
Առաջնորդարանի
«Տիգրան եւ Չարուհի Տեր

Ղազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեւորականաց միօրեայ համագումար, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, եւ մասնակցութեամբ Թեմիս միաբան հայրերուն եւ քահանայից դասուն:

Համագումարէն առաջ, «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն:

Արարողութեան աւարտին, «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ հոգեւոր խորհրդածութեան պահը առաջնորդեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ մեկնելով Պետրոս Առաքեալի երկրորդ Ընդհանրական Նամակի 1.1-8 համարներէն, վեր առաւ ընդհանրապէս քրիստոնեային եւ յատկապէս հոգեւորականին կոչումը, Առաքեալին բառերով հրաւիրելով համագումարին մասնակցող եկեղեցականները Տէր Յիսուսի գիտութեամբը լեցուելու եւ անգործ ու անպտուղ չմնալու:

Առաջնորդ Սրբազան Հօր հոգեւոր խորհրդածութենէն ետք, համագումարը սկսաւ իր աշխատանքներուն: Առաջնորդ Սրբազան Հայրը նախ ողջունեց երեց միաբանակից եղբայրը՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեանը, ինչպէս նաեւ բոլոր հոգեւոր հայրերը, գնահատելով անոնց նուիրումն ու մատուցած ծառայութիւնը հոգեւոր մարզէն ներս, բոլորը հրաւիրելով՝ լաւէն լաւագոյնին ձգտելու եւ անխոնջ ծառայելու:

Առաջնորդ Սրբազանը նաեւ Թեմական աշխատանքներու համապարփակ ներկայացումը կատարեց, սկսելով հոգեւոր-արարողական կեանքէն, ժողովուրդին հետ քահանայից յարաբերութենէն, շեշտելով նամանաւանդ Թեմս երիտասարդ ու պատրաստուած նոր քահանաներով օժտելու աշխատանքները: Ապա մաղթեց, որ ժողովական այս օրը ընթանայ հեզասահ ու դառնայ՝ պտղաբեր:

Սրբազան Հօր բացման խօսքէն ետք կատարուեցաւ Դիւանի ընտրութիւն: Հոգեւորականաց Համագումարի Դիւանի անդամ ընտրուեցան Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, ատենապետ, իսկ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան, ատենադպիր: Ատենապետ Հայր Սուրբը հրաւիրեց Եփրեմ Սրբազանը, որ ինք ալ, իր կարգին, իր սրտի խօսքը ուղղէ համագումարին մասնակից հոգեւորականներուն: Եփրեմ Սրբազան, նախ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, իրեն տուած այս հրաւերին համար եւ Թեմէն ներս անոր տարած ժիր ու կայտառ աշխատանքին համար, ապա կոչ ուղղեց քահանայ հայրերուն, որ համախումբ աշխատանքով կարենան լաւագոյնս յագուրդ տալ ժողովուրդի հոգեւոր ու ազգային կարիքներուն, անելցնելով՝ թէ որակեալ քահանայից խումբով է որ կ'ապահովուի Թեմիս յառաջընթացն ու յաջողութիւնը:

Ա. Նիստի ընթացքին, ներկայացուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովին յղուելիք Կրօնական Ժողովի տարեկան տեղեկագիրը:

Կէսօրին, սիրալիր մթնոլորտի մէջ, տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

Համագումարի երկրորդ նիստը սկսաւ յետ միջօրեին: Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան, Հայ Մանուկի Տարուան առիթով ներկայացուց դասախօսութիւն մը, նիւթ ունենալով՝ «Հայ Մանուկի Կրթութիւնը անցեալին եւ այսօր»: Դասախօսութենէն ետք հոգեւորականները միասնաբար խօսեցան ծխական շրջաններէ ներս Հայ Մանուկի Տարուան առիթին նուիրուած կազմակերպուելիք ձեռնարկներու մասին:

Ապա տեղի ունեցաւ Կրօնական Ժողով: Առաջնորդ Սրբազան Յայրը եւ քահանայ հայրերը զեկոյցներ տուին յառաջիկային տարուելիք աշխատանքներու մասին: Կատարուեցաւ Ազգային Երեսփոխանական Ժողովի եկեղեցական երեսփոխաններու ընտրութիւնը, եւ բանաձեւուեցան համագումարին կողմէ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք առաջարկները:

Համագումարի վերջին բաժինով, նկատի առնուեցան յառաջիկայ ամիսներու աշխատանքներու գլխաւոր հանգրուանները եւ յատկապէս 6-23 Յոկտեմբեր 2011-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետի Թեմիս շնորհելիք հովուապետական այցին մասին:

Եզրափակիչ խօսքով, Առաջնորդ Սրբազանը անգամ մը եւս գնահատեց համագումարին մասնակցող հոգեւոր հայրերը, կոչ ուղղելով բոլորին՝ դրական հոգիով ապրելու եւ բացարձակ բժախնդրութեամբ կատարելու իրենց վստահուած առաքելութիւնը:

Երեկոյեան ժամը 5:00-ին, վերջ գտաւ քահանայից համագումարը՝ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով եւ «Աշակերտք Քրիստոսի» շարականի միատեղ երգեցողութեամբ:

ANNUAL PRELACY CLERGY CONFERENCE



On Wednesday, May 11th, 2011, on the eve of the 39th Representatives Assembly, the annual Prelacy clergy conference was held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall. The conference was presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, with the participation of the clergy order.

The day began with Morning Services at the "St. Dertad and St. Ashken" Chapel.

Clergy members then headed to the hall for a spiritual meditation led by the Prelate who reflected on the calling and mission of clergy. Quoting from 2 Peter 1:8, the Prelate stressed that in order for their service to remain fruitful, they must grow in faith "in the knowledge of God and of Jesus our Lord" (2 Peter 1:2)

The conference then convened with opening remarks by the Prelate who welcomed H.E. Archbishop Yeprem Tabakian and clergy members, and commended their dedicated service.

The Prelate then briefly spoke on the endeavors of the Prelacy including religious services and rites, relations between clergy and their congregations,

and the importance of having young and well-prepared clergy. He then wished success to the day's proceedings.

The election of the officers followed, with Very Rev. Fr. Muron Aznikian elected Chairman and Rev. Fr. Ardak Demirjian Secretary. Fr. Muron invited Archbishop Tabakian to deliver his remarks. Archbishop Tabakian thanked the Prelate for the invitation to participate in the conference and commended his hard work and efforts for the advancement of the Prelacy. He also urged clergy members to spare no effort in ensuring that the spiritual needs of their respective communities are fulfilled and noted that a well-prepared and devoted clergy order is vital to the successful realization of the Prelacy's mission.

During the first session the Religious Council report which will be presented at the Representatives Assembly was analyzed by the participants and revised accordingly.

After lunch, the second session convened with a lecture by Archpriest Fr. Vicken Vassilian on the educating of the Armenian child in the past and present day. A discussion followed on local events each parish is planning to celebrate the "Year of the Armenian Child".

A discussion on activities anticipated for the upcoming year then took place, followed by the election of religious delegates to the Representatives Assembly and the drafting of suggestions to present to the upcoming Assembly.

The last session was dedicated to the planning of the Pontifical Visit of H.H. Catholicos Aram I which will take place from October 6th to the 23rd of this year.

The conference concluded with the Prelate's closing remarks and benediction, and the day closed with the collective singing of the "Ashagerdk Krisdosi" (Disciples of Christ) hymn.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու Խորհուրդը, յանձինս Հայ Առաքելական, Ղրպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու, Երեքշաբթի, 10 Մայիս 2011ին, իր հերթական ժողովը գումարեց Ս. Եփրեմ Ասորի Եկեղեցւոյ Առաջնորդարանէն ներս, Պըրպէնք:
Առաւօտեան ժամը

11:00ին, Առաջնորդ Սրբազան Հայրեր՝ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Գերշ. Ս. Եուճին Արք. Քափլան (Ասորի Ուղղափառ) եւ Գերշ. Ս. Սրապիոն Եպիսկոպոս (Ղըպտի Ուղղափառ), իրենց ընկերակցող եկեղեցական հայրերու մասնակցութեամբ եկեղեցական կարճ արարողութիւն կատարելէ ետք, անցան տարեկան ծրագրի մշակման աշխատանքներուն:



Առաջնորդ Սրբազան
Հօր կ'ընկերանային
Քրիստոնեական
Դաստիարակութեան
Բաժանմունքի վարիչներ՝
Գերպ. Ս. Միւռոն Ծ. Վրդ.
Ազնիկեան եւ Հոգշ. Ս.
Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան,
եւ Էնսիւնոյի Սրբոց
Նահատակաց եկեղեցւոյ
հոգեւոր հովիւ Արժ. Ս.
Ռազմիկ Զնկ.
Խաչատուրեան:

Ժողովը քննարկեց
յառաջիկայ միատեղ ծրագիրներու եւ աշխատանքներու կարելիութիւնները:
Ժողովը, լսելէ ետք Ուղղափառ եկեղեցիներու կիրակնօրեայ
վարժարաններու եւ երիտասարդաց յանձնաժողովներու գեկոյցները,
որոշեց.

ա.- Նոյեմբեր 2011ին, Ուղղափառ եկեղեցիներու Կիրակնօրեայ
Վարժարաններու 8-13 տարեկան աշակերտներու մասնակցութեամբ եւ
երգեցողութեամբ Ս. Պատարագ եւ աշակերտական միօրեայ
դաստիարակչական հաւաք ունենալ:

բ.- Ուղղափառ եկեղեցիներու Միջ-Երիտասարդաց յանձնախումբը
Նախորդ տարիներու նման յառաջիկայ ամիսներու ընթացքին,
դաստիարակչական ծրագրով միօրեայ օգտաշատ հաւաք կազմակերպէ:

Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան
Գրասենեակը եւ Կիրակնօրեայ Վարժարաններու Վարիչ Մարմինը
հովանաւորութեամբ եւ գլխաւորութեամբ թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր,
արդէն իսկ ծրագրումի նախնական աշխատանքներու ձեռնարկած են
գործնապէս եւ լաւագոյնս մասնակցելու Արեւելեան Ուղղափառ
Եկեղեցիներու կիրակնօրեայ վարժարաններու թէ միջ-երիտասարդական
հաւաքներուն:

Հաւաքական ճաշով, յիշատակի հաւաքական նկարով եւ աղօթքով
փակուեցաւ ժողովը:

PRELATE PARTICIPATES IN MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On Tuesday, May 10th, 2011, the Council of Oriental Orthodox Bishops held their regular meeting at St. Ephraim Syriac Orthodox Cathedral, hosted by H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan (Prelate of the Syriac Church of the Western U.S.)

The day began with a prayer service led by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion, and with the participation of clergy members from the three dioceses. Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, and Rev. Fr. Razmig Khatchadourian also participated in the service and meeting.

During the meeting, reports were presented on the activities of the Sunday School and Youth Committees, and future collaborative efforts were drafted, among them the following:

- Oriental Orthodox Churches Sunday Schools Divine Liturgy and gathering in November of 2011.
- Gathering of the Oriental Orthodox Churches Youth Groups in the coming months.

The day concluded with a luncheon.

ԹԵՄԻՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ՅՈԳԵՆՈՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ



Հովանաւորութեամբ
Թեմիս Բարեխնամ
Առաջնորդ Բարձր. Ս.
Սուշեղ Արք.
Մարտիրոսեանի, Շաբաթ, 7
Մայիս, 2011-ին, Ազգ.
Առաջնորդարանի «Տիգրան
եւ Չարուհի Տեր
Ղազարեան» սրահին մէջ
գումարուեցաւ
երիտասարդաց միօրեայ
հոգեւոր համագումար մը:
Համագումարի ընդհանուր
թեման էր «Որո՞ւ կապուած
ես», որուն մասնակցեցան

Արեւմտեան Թեմի եկեղեցիներու երիտասարդ-երիտասարդուհիներէն շուրջ յիսուն հոգի, հոգեւոր առաջնորդութեամբ Առաջնորդարանիս Զրիստոսեանկան Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգեշ. Ս. Պարթեւ Վրդ. Կիլիկեանի:

Համագումարը սկսաւ առաւօտեան աղօթքներով եւ ժամերգութեամբ: Նախաճաշէն ետք, բարի գալուստի խօսք արտասանեց երիտասարդաց միութեան Կլէնտէյլի մասնաճիւղի ատենապետ Բարշ. Ռաֆֆի Սրկ. Զիւրքճեան:

Համագումարի ընթացքին քննարկուեցաւ *միտիայի*՝ լրատուական ու քարոզչական ճամբով Աստուած եւ երիտասարդութիւնը կապին մասին: Խօսուեցաւ մերօրեայ ժամանակներուն լրատուութեան կարելորութեան, անոր արագ հասողութեան, թողած դրական ու ժխտական ազդեցութեանց, յատկապէս՝ internet, facebook, twitter, T.V եւ այլ հեռարձակման միջոցներու մասին: Ներկայ երիտասարդներուն յոյժ հետաքրքրող այս նիւթերը աշխոյժ պահեցին զանոնք, որոնք շինիչ մասնակցութիւն բերին, պարզելով իրենց միտքն ու գաղափարները, յատկապէս հաւաքաբար քննարկելով լրատուութիւնը դրական ձեւով օգտագործելու լայն կարելիութեանց պարագան, հոգեւորապէս աւելի աճելու, Աստուծոյ խօսքը առաւել եւս տարածելու եւ նոր երիտասարդներ ներգրաւելու եկեղեցւոյ ու ազգի կեանքէն ներս: Ներկայացումները կատարեցին Սերօ Իսկէնտէրեան եւ Սարինէ Խանպապայի, ապա քննարկումներով հանդես եկան Սուրեն Օտապաշեանն ու Սիրուն Կորկիսը:

Կեսօրին միատեղ ունեցան սիրոյ ճաշ: Ծաշէն ետք, Աստուածաշնչական, սրբախօսական եւ ազգային յուշարձաններու եւ արժէքներու հարցումներով շատ հետաքրքրական զարգացման մրցում մը տեղի ունեցաւ, նոր առաւել մտերմութիւն ու ջերմութիւն ստեղծեց հինգ խումբերու բաժնուած երիտասարդներու միջեւ:

Յետ միջօրէի դասախօսութիւն-գրոյցը ներկայացուց Շանթ Սրկ. Մանճըլիքեանը, խօսելով արդի բժշկութեան մէջ կատարուող *Սըրըկընտի* մասին (Surrogacy):

Ապա Հայր Պարթեւ միօրեայ համագումարի ընթացքին քննարկուած բոլոր նիւթերը եզրակացուց եւ համապարփակ պատասխան տուաւ երիտասարդներու ուղղած բոլոր հարցերուն:

Երիտասարդները ուրախութեամբ դիմաւորեցին Առաջնորդ Սրբազան Հայրը, որ այս առիթով անոնց յղեց իր պատգամը: Սրբազան Հայրը նախ իր գնահատանքն ու ուրախութիւնը յայտնեց ի տես երիտասարդներու աշխոյժ մասնակցութեան այս միօրեայ համագումարին: Անոնց փոխանցեց իր հոգեւոր խրատները, կոչ ուղղեց բոլորին կապուած մնալ Աստուծոյ, ինչպէս նաեւ մեր եկեղեցւոյ հոգեւոր ու ազգային սրբութիւններուն ու արժէքներուն: Այս առիթով նաեւ, Սրբազան Հայրը համագումարին մասնակցող իւրաքանչիւր երիտասարդի նուիրեց Աստուածաշունչ մատեան մը: Առաջնորդ Սրբազան Հօր հետ առնուեցաւ նաեւ յիշատակի նկար մը:

Աւելի ուշ երեկոյեան, Ազգ. Առաջնորդարանի »Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն« մատրան մէջ, Կիրակամտից ժամերգութիւն տեղի ունեցաւ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ երիտասարդներուն:

Ընթրիքէն ետք, մասնակիցները ընկերային մտերմիկ մթնոլորտի մէջ իրարու հետ գրուցեցին, իրարու կեանքի մասին վկայութիւններ տուին, դաշնամուրի վրայ ժողովրդական երգեր նուագեցին ու երգեցին:

Բոլորին սիրտերը ցնծութեամբ լեցուեցան: Անոնք վերանորոգուած հոգիներով եւ նոր պաշարով իրենց տուները վերադարձան, իրենց հետ տանելով Ամենասուրբ Երրորդութեան պարգեւած օրհնութիւնը, լուսաւորութիւնն ու խաղաղութիւնը:

ACYA 3RD ANNUAL SEMINAR HELD AT THE PRELACY



On Saturday, May 7th, 2011, the Armenian Church Youth Association (ACYA) held its third annual Seminar at the Western Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Nearly 50 members participated in the educational and spiritual seminar which was led by Very Rev Fr Barthev Gulumian and entitled, was

"How Are You Connected...".

The seminar convened early in the morning with prayers, followed by breakfast. Opening remarks were delivered by ACYA Glendale Chapter Chairman Deacon Raffi Kurkjian. The main topic of the day was presented by two fellow ACYA members, Sarineh Khanbabaei and Sero Eskandaryan, who discussed the positive and negative effects of media on Christian life and its influences on Christian beliefs.

There were additional discussions by Suren Odabashian and Sirun Korkis. At noon, the youth gathered to thank the Lord for His blessings as they enjoyed delicious home made meals.

In the afternoon, the program began with an exciting educational game of Bible Jeopardy. The questions were based on the Bible and themes related to the topic of the day, as well as questions about Armenian saints and churches. After a competitive game, members enjoyed snacks as they relaxed and took a short break. Members returned to their seats as they got ready for the second main discussion of the day. The topic, Surrogate Motherhood, was presented by Deacon Shant Manjelian, who discussed its effects on Christianity and its role in Armenian culture.

Later in the afternoon, Very Rev Fr Barthev Gulumian, took the stage to answer all the questions that the youth had about the main two topics discussed during the day.

With great honor and joy, ACYA members welcomed the Prelate who conveyed his blessings and remarks to the youth. As a token of appreciation for

all the hard work and success of the seminar, the Prelate presented each participant with a copy of the Armenian Bible.

The seminar concluded with a group picture

Evening prayers were then offered, led by the Prelate and with the participation of Fr. Barthev and Rev. Fr. Ardak Demirjian.

The youth later enjoyed the rest of the evening having dinner, playing the piano, singing, and giving testimonies.

The overall experience of the seminar was given high reviews as members got a better insight of the days' topics, in addition to gaining a better understanding on how the media affects Christians today. They all look forward to the fourth annual Seminar in 2012.

Յ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 36-ՐԴ ՄԱՐԶԱԽԱԴԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՈՒ ԶԱՅԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կիրակի, 15 Մայիսին, կ.ա. ժամը 11-ին, Պըրմինկիեմ Հայ Աթոլի շրջափակին մեջ, յատուկ արարողութեամբ պիտի կատարուի Յ.Մ.Ը.Մ.Ի Նաւասարդեան 36-րդ Մարզախաղերու բացման հանդիսութիւնն ու ջահի օրհնութիւնը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Մոնթեպելլոյի Ա. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւիներէն՝ Արժ. Տ. Նարեկ Ա. Քիւնյ. Փեղիվանեան ներկայ պիտի ըլլայ արարողութեան ու պիտի կատարէ բացման աղօթքը:

Նաւասարդեանի ջահավառութենէն առաջ տեղի պիտի ունենայ կոկիկ յայտագիր մը, որու ընթացքին խօսք պիտի առնեն Յ.Մ.Ը.Մ.Ի պատասխանատուներ:

OPENING CEREMONY OF THE 36TH NAVASARTIAN GAMES

On Sunday, May 15th, the 36th Navasartian Games will kick off at Birmingham High School with the opening ceremony and the lighting of the torch.

On behalf of the Prelate, Archpriest Fr. Nareg Pehlivanian will attend the ceremony and deliver the opening prayer.
